Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Ապրելով ու գործելով Հայաստանից դուրս և իր ամբողջ գիտակցական կյանքում ոչ մի անգամ չլինելով հայրենիքում, Ալիշանը, բնականաբար, ամենօրյա առնչություններ չէր ունենալու հայ մտավորականության ներկայացուցիչների հետ, ինչ որ այնպես հասկանալի է ու բնական, ասենք՝ Աղայան, Ռաֆֆու կամ Թումանյանի համար։ Նրա ծանոթությունների գերակշիռ մասը «բնաշխարհիս գիտուններուն հետ» (իր արտահայտությունն է)[1] հիմնականում սահմանափակվել է մի քանի ժամի չափ տևող հանդիպումների տպավորություններով, երբ վերջիններս իրերի բերումով եկել են Վենետիկ և հանդիպել նրան։ Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ընդգծել այն *առաջին* առանձնահատկությունը, որ նրանց հուշապատումներում ամենևին էլ հազվագյուտ չեն այնպիսինները, որոնք լավ գրված ակնարկի կամ նույնիսկ նովելի տպավորություն են թողնում։ Բազմաթիվ բնորոշ օրինակներից հիշենք Գր. Բաշինջաղյանի «Ս.Ղազարի կղզին 1884 թվականին» հուշապատումը[2], որը որպես գեղարվեստական ստեղծագործություն երկար ժամանակ զետեղվում էր զանազան ժողովածուներում ու ալմանախներում և նույնիսկ բարձր դասարանի դպրոցական դասագրքերում։

Եթե Նահապետը ֆիզիկապես հեռու էր հայկական իրականությունից, այստեղից բխող բոլոր հետևանքներով, դրա փոխարեն նա ուներ մեկ այլ առավելություն, որից զուրկ էին ուրիշները. նա իր ամբողջ կյանքն անց էր կացրել Վենետիկի համբավավոր Մխիթարյան միաբանության ներսում, մեծանուն հայագետների, նշանավոր բանասեր-գիտնականների, հայ ժողովրդի հոգևոր հարստությանը ձև ու կերպարանք տվող մեծությունների շրջանում։ Ալիշանի ժամանակ իրենց գրական փառքի զենիթում էին նրա ավագ ընկերներն ու գրական առաջին փորձերը քաջալերողները՝ Արսեն Բագրատունին ու Էդուարդ Հյուրմյուզյանը, տեսական-թատերագիտական հոդվածներով շարունակում էր հանդես գալ Պետրոս Մինասյանը, որն այս բնագավառում անմրցելի մեծության անուն ուներ, որպես հայկաբան-բանասեր սկսել էր հռչակվել Ալիշանի մտերիմ ընկերը՝ Գարեգին Զարբհանալյանը, վաստակներով ծանրաբեռնված՝ իրենց կյանքի մայրամուտն էին ապրում Գաբրիել Ավետիքյանը, Ղուկաս Ինճիճյանը, Մանվել Զախջախյանը, գրականության անդաստանում արդեն իր առաջին քայլերն էր անում Ալիշանի կրտսեր գրչակիցը՝ Բարսեղ Սարգիսյանը և այլն։ Անուններ են սրանք, որոնցից և ոչ մեկը պերճախոս հանձնարարականի կարիք չունի։ Իսկ «Վենետիկի Մխիթարյան միաբանություն» արտահայտությունը սոսկ աշխարհագրական հասկացողություն կամ անհատի՝ տվյալ կազմակերպությանը պատկանելը ցույց տվող ըմբռնում չէր, առավել ևս այն ժամանակաշրջանում, երբ ապրում ու գործում էր Ալիշանը։ Ամենից առաջ դա նշանակում էր աշխարհայացքի և աշխարհընկալման որոշակի համակարգ, մտածողության առանձնահատուկ, ուրիշներից տարբերվող եղանակ և, տվյալ դեպքում մեզ համար կարևոր, հուշագրելու ոչ սովորական մեթոդ։ Նշենք, որ հիշյալ իրավիճակը որոշակի տարբերիչ երանգ է մտցնում հուշագրության հանրածանոթ հասկացողության և Մխիթարյան միաբանության անդամների՝ Ալիշանին վերաբերող զանազան մեծ ու փոքր հուշապատումների միջև։ Սա է այն *երկրորդ* առանձնահատկությունը, որով բնութագրվում է Մխիթարյան հուշագրությունը։

Եվ, վերջապես, մի *երրորդ* առանձնահատկություն էլ, որն արդեն կապվում է Ալիշան-մարդու բնավորության հետ։ Լինելով առասպելական համեստության տեր, իր մասին զարմանալի

---

[1] «Ալիշանը ժամանակակիցների հուշերում» (բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս.Շտիկյանի), Երևան, 1974, էջ 4։

[2] Նույն տեղում, էջ 92-96 (հետագայում ժողովածուից կատարվող վկայակոչումների էջերը կնշվեն տեքստին կից)։

փոքր կարծիք ունեցող, ջանալով կյանքում ապրել որքան հնարավոր է անշշուկ ու անձայն, առանց ուրիշներին խանգարելու, աշխատելով որքան կարելի է քիչ նկատվել ու քիչ երևալ մարդկանց, իսկ ստիպողական անհրաժեշտության դեպքում երևալիս էլ՝ իրեն պահել սակավաբառ ու խոսակցության մեջ կարճառոտ, Ալիշանը, բնականաբար, շատ և բազմակողմանի «նյութ» չէր տալիս իր մասին հուշագրողներին, մանավանդ եթե վերջիններս նրան հանդիպել էին ժամանակի համեմատաբար փոքր հատվածում: Այս պատճառով էլ Ալիշանի մասին հուշագրողների գերակշիռ մասի մոտ առաջին պլանի վրա են մղվում նախ՝ «սկիզբեն իսկ աչքի զարնող» (Ա.Արփիարյանի հուշապատումը, էջ 10) հատկանիշները. Նահապետի արտաքին նկարագրությունը, նրա սիրալիր վարվեցողությունը, առաջին հանդիպման ժամանակ փոխանակվող խոսքերն ու սրամտությունները: Խնամքով նկարագրվում են Ալիշանի աշխատասենյակը, գրքերով ու այլևայլ ձեռագրերով ծանրաբեռնված գրասեղանը, «հելվետիական զարդաքանդակ ժամացույցը» (Ս. Երեմյանի հուշապատումը, էջ 131), որը կախված էր գրասեղանի կողքին և այլն: Հուշագրության «հերոսի»՝ Ալիշանի ներքին էությունը, նրա բնավորության գծերը, գիտելիքները, հակումներն ու հետաքրքրությունները բացահայտվում էին երկրորդ հերթին, եթե կարելի է այսպես ասել՝ երկրորդ պլանի վրա: Նահապետի՝ «դժվար բռնվող մարդ լինելը» (Ավ. Իսահակյանի հուշապատումը, էջ 222) և դրա հետևանքով նրան նվիրված հուշապատումներում առկա վերոհիշյալ առանձնահատկությունը գալիս է մի տարբերիչ երանգ էլ ավելացնելու նրան վերաբերող և մեր ուրիշ գործիչներին նվիրված հուշագրությունների միջև:

Հարց է ծագում. իսկ ի՞նչ են ներկայացնում Ալիշանի մասին եղած իր ժամանակակիցների հուշերը՝ դիտված ամբողջության մեջ:

Առ այսօր մեզ հայտնի շուրջ քսանհինգ հուշապատումները քննելիս, ուշադրությունից չի վրիպում հուշագրողների ամենազանազան մակարդակ և հասարակական կյանքում ամենատարբեր դիրք ու աստիճան ունենալու հանգամանքը: Ալիշանի մասին հուշերով հանդես են եկել նրա նախկին աշակերտ, հրապարակախոս, գրող ու մշակութային գործիչ Արփիար Արփիարյանը, և այն էլ մի քանի անգամ, գրականագետ-բանասեր Գրիգոր Խալաթյանցը, նշանավոր նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանն ու Արշակ Ֆեթվաճյանը, Փարիզի հայկական համայնքի առաջնորդ, ամսագրի խմբագիր Կարապետ Պասմաճյանը, մանկագիր և մանկական ամսագրերի խմբագիր Տիգրան Նազարյանը, պետական-հասարակական գործիչ Մինաս Նուրիխանյանը: Արժեքավոր հուշապատումներ են թողել մեր իրականության երկու նշանավոր դեմքերը՝ ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին և հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանը: Եթե այս ամենին ավելացնենք, որ տարբեր առիթներով պարբերականներում հանդես են եկել Մխիթարյան միաբանության անդամները (Սիմոն Երեմյան, Հովհաննես Թորոսյան, Քերովբե Չրաքյան, Մեսրոպ Ճանաշյան, Թադևոս Թովմաճան), նաև նշենք, որ հանդես են եկել այնպիսի անձինք, որոնք գրեթե ոչ մի հետք չեն թողել մեր գրականության ու մշակույթի պատմության մեջ (Մ.Զալյան, Աբրահամ Տեր-Հակոբյան), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի՝ իրարից միանգամայն տարբեր դիրքի ու դրության մարդիկ էին Նահապետի մասին պատմողները: Այս հանգամանքը մեզ համար կարևոր նշանակություն ունի այն պատճառով, որ հուշագրողներից յուրաքանչյուրը Ալիշանի մասին գրելիս, նրան ներկայացնում է իր ըմբռնումների ու պատկերացումների համաձայն, Նահապետին բնութագրելիս կամ նրա գիտական տեսակետներն ու կարծիքները շարադրելիս, դա անում է իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում: Այս էլ, իր հերթին, թույլ է տալիս Ալիշանին տեսնել տարբեր տեսանկյուններից արձակված ճառագայթների կիզակետում և, բնականաբար, ավելի ճիշտ ու հստակ պատկերացում կազմել նրա՝ որպես բանաստեղծի, գիտնականի ու մարդու մասին: Եթե Մինաս Նուրիխանյանը հուշագրում է Ալիշանի մասին՝ ներկայացնելով նրան որպես լեզվագետ-լեզվաբան, Արփիար

Արփիարյանը՝ որպես ուսուցիչ ու մանկավարժ, Կյուրեղ Քիպարյանը տեղեկացնում է, թե ըստ Ալիշանի նախնական մտահղացման ինչպիսի կառուցվածք պետք է ունենային «Նուագք»-ների հանրահայտ ժողովածուները, Հովհաննես Թորոսյանը ցույց է տալիս, թե ինչպիսին էր Ալիշանն իբրև ընկեր ու կրտսեր գրչակիցներին խորհրդատու, Մեսրոպ Ճանաշյանը, վերջապես, բացահայտում է ուշագրավ մի կապ Ղևոնդ Ալիշանի և նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի միջև և այլն, ապա այս բոլորի գիտական մեկտեղումը և այդ հենքի վրա արվող եզրակացությունները լայն հնարավորություններ են ընձեռում ավելի հանգամանորեն ճանաչելու Նահապետին՝ մի մարդու, որը, ինչպես ասացինք, հեշտությամբ «բռնվողներից» չէր։ Այս ամենը մի անգամ ևս գալիս է հավաստելու, որ շուրջ քսանհինգ մեծ ու փոքր հուշապատումները ընդհանուր առմամբ ճիշտ են ներկայացնում Նահապետի կյանքի այլևայլ հանգամանքները, որոնց մասին, եթե չլինեին դրանք, մենք հավանորեն ոչինչ չէինք իմանալու։ Չէինք իմանալու, օրինակ, թե աշխատանքային ինչպիսի վերակարգ ուներ Ալիշանը (գրասեղանի մոտ էր առավոտյան 4-4 ½-ից և ընդմիջումներով՝ մինչև երեկոյան 10-ը), ինչպես էր օգնում միաբանների՝ հրատարակության պատրաստվող աշխատությունները ավելի բարելավելուն (նեղ, երկար թղթի վրա նշում էր իր դիտողությունները, հանձնում էր հեղինակին, պատվիրելով, սակայն, որ իր արածի մասին չհիշատակվի), ինչպես էր օգտվում անհրաժեշտ գրականությունից (կարդացել էր Միաբանության շուրջ 1600 ձեռագրերը, արտագրել անհրաժեշտ նյութերը, իսկ հետագայի համար՝ նշել ձեռագրերի էջահամարները) և այլն։ Ահա այս է, որի բացահայտմանը և որի մասին ավելի լրիվ գաղափար կազմելուն այնպես օգնում են «ալիշանյան» հուշապատումները։

Իսկ ինչպիսի՞ բնույթ ու ավանդույթներ ուներ Մխիթարյան միաբանության հուշագրությունը մինչև Ալիշանը։ Երբ քննության առարկա ենք դարձնում այս հարցը, գրեթե անմիջապես բացահայտվում է մի հետաքրքրական երևույթ, որը հատկանշական է միայն ու բացառապես Մխիթարյաններին։ Լինելով խոշոր, հաճախ անհավակնորդ մեծություններ մեր գրական-գիտական և մշակութային կյանքի ամենատարբեր բնագավառներում, հայկական մտավոր կյանքը լցնելով իրենց արժեքավոր աշխատություններով, որոնցից շատերը չեն հնացել անգամ այսօր, Մխիթարյանները, սակայն, եթե փոքր-ինչ խիստ արտահայտվելու լինենք, հուշագրություն չունեն։ Սա առավել ևս զարմանալի է թվում այն պատճառով, որ մինչև Ալիշանի հանդես գալը միաբանությունն արդեն հարյուր հիսուն տարվա պատմություն ուներ, տվել էր Միքայել Չամչյանի, Եղիա Թովմաճանի, Հարություն և Մկրտիչ Ավգերյանների նման մեծություններ, տվել էր գրական-հայագիտական գործիչների աստղաբույլը։ Եվ այս բոլորով հանդերձ, ոչ հիշյալ անձինք իրար մասին և ոչ էլ ուրիշները այդ անձանցից և ոչ մեկի մասին հուշեր գրած կամ հրատարակած չունեն։ Նույնիսկ միաբանության հիմնադրի՝ Մխիթար Սեբաստացու մասին, որին հաջորդները, ընդհուպ մինչև մեր օրերը գովել, փառաբանել ու աստվածացրել են, նրա ժամանակակիցներից և ոչ մեկը ոչ մի հուշապատում չի թողել։ Մի քանի հպանցիկ նախադասություններ, տվյալ Մխիթարյանի կյանքից մեկ-երկու փոքր դրվագ, այլ շարադրանքի արանքում միջանկյալ պատմվող մի քանի տողանոց մանրամասն, – ահա թերևս այն ամենը, ինչ հուշագրության բնագավառում գոյություն ուներ Մխիթարյանների մոտ մինչև Ալիշանը։ Այս երևույթի պատճառը հասկանալու համար պետք է մի քանի խոսք ասել Միաբանության կյանքում գործող մի օրինաչափության մասին, որը իր հաստատման օրվանից սկսած առ այսօր, կայուն ու անփոփոխ մնում է ուժի մեջ։

Հիմնադրելով այն միաբանությունը, որը հետագայում պետք է ժառանգեր իր անունը, Մխիթար Սեբաստացին այդ միաբանության համար գործողության ուղեցույց հանդիսացող քսաներկու կետից բաղկացած «Կանոնադրության» մեջ մտցրել էր նաև մի կետ (6-րդը), ըստ որի, միաբանությանը անդամագրված յուրաքանչյուր ոք իրավունք չունի տարբերվելու մյուսներից և,

բնականաբար, ոչ մի արտոնություն կամ իրավունք չպետք է ունենար մյուսների նկատմամբ։ Այս կետը հասկացվեց հենց այնպես, ինչպես գրվել էր և մանավանդ մինչև Ալիշանն ընկած ժամանակահատվածում կիրառվում էր ամենայն հետևողականությամբ։ Միաբանության անդամ դառնալ ցանկացող ամեն մեկը, ով կատարում էր ՈՒխտադրության հանդեսը, այսինքն՝ պաշտոնապես ճանաչվում էր Մխիթարյան ուխտի անդամ, այդ րոպեից սկսած, որպես ինքնուրույն անհատ դադարում էր գոյություն ունենալուց և ձուլվում-լուծվում էր ամբողջի մեջ։ Ով էլ լիներ այդ անհատը, լիներ հռչակավոր Միքայել Չամչյանը, թե գրական ոչ մի վաստակ չունեցող Պետրոս Մարտիկյանը, հանրահայտ Արսեն Բագրատունին, թե ընդամենը մեկ բանաստեղծություն թարգմանած Աբրահամ Սահակյանը, վերջապես ինքը՝ Մխիթար Աբբահայրը, թե նրան ժամանակակից՝ մեկ-երկու գրքի առաջաբան գրած Պողոս Սիմոնյանը, անկախ կատարած գործից, դիրքից, մեր մշակույթի ասպարեզում ունեցած տեղից ու դերից, – իրավունք չուներ գեթ աննշան չափով արտոնյալ վիճակում գտնվել միաբանության որևէ այլ անդամի նկատմամբ։ Մխիթարյան միաբանությունն իբրև հավաքական ամբողջություն ներկայացնելու և որպես այդպիսին դիտելու ու ճանաչելու ձգտումը այնքան մեծ էր, որ երբ 1843 թ. սկսեց հրատարակվել միաբանության պաշտոնական պարբերականը՝ «Բազմավեպը», այնտեղ զետեղված նյութերից և ոչ մեկը ստորագրված չէր, և այդպես շարունակվեց մի քանի տարի շարունակ։ Այդպես էր նաև սկզբնական շրջանում առանձին գրքով հրատարակվող աշխատությունների անվիճելիորեն գերակշիռ մասը. դարձյալ անստորագիր։ Ասվածից պարզ է, թե մինչև որ աստիճան հետևողականորեն էր կիրառվում «մեծ հիմնադրի» սահմանած օրենքը։ Խախտել այդ՝ կնշանակեր հանդուրժել, որ միաբաններից մեկը բարձր դասվի մյուսներից, կնշանակեր անհարմար վիճակի մեջ դնել նախ նրան, և ապա, հրապարակավ անհամեստ երևալ, քանի որ խոսում ու գրում ես քո գրչակից ընկերոջ մասին։ «Անոնք այնպես կկարծեն, – իր «Հայր Ղևոնդ Վ. Ալիշան» հուշապատումում գրում էր Ա.Արփիարյանը, – թե անձնագովություն մը ըրած կըլլան, եթե իրենցմե մեկուն վրա շատ խոսին հրապարակավ. ամենքը մեկ մարմին կկազմեն, իրենցմե մեկը գովելով ինքզինքնին գոված կըլլան» (էջ 48)։ Չնայած Արփիարյանի այս միտքը ասված էր XIX դ. 90-ական թվականներին, բայց հավասարապես ճիշտ էր մինչև Ալիշանն ընկած Մխիթարյան միաբանության ամբողջ պատմության համար, իսկ այս հանգամանքը մի անգամ ևս գալիս է ապացուցելու, թե ինչպիսի խստաշունչ օրինապահություն էր տիրում միաբանության ներքին կյանքում։ ՈՒրեմն պարզ է, թե ինչու չէին կարող հուշապատումներ գրվել, ասենք՝ Եղիա Թովմաճանի կամ Մանվել Ջախջախյանի և կամ այլ՝ այս կարգի մեծությունների մասին և ինչու նրանցից ոչ մեկը իր գիտակցական ամբողջ կյանքում երբեք հանդես չեկավ համապատասխան հուշապատումներով՝ ավագ կամ կրտսեր ընկերների մասին։

Պակաս կարևոր չէր նաև հետևյալ հանգամանքը։ Չնայած հայկական իրականության պայմաններում այդ բնույթի գործերը հանդես են գալիս շատ վաղուց, բայց հուշագրությունը որպես այդպիսին, որպես մտածողության արտահայտության հատուկ ձև, իրեն դրսևորեց XVIII դ., ավելի ճիշտ՝ այդ դարի վերջերից սկսած։ Հովսեփ Էմինի հուշերը, որոնք անգլերեն լեզվով հրատարակվեցին Լոնդոնում 1792 թ. և Հարություն Արարատյանի համաբնույթ աշխատանքը, որը ռուսերեն հրատարակվեց Պետերբուրգում 1813 թ., գրական այդ ժանրի նախակարապետները հանդիսացան, իսկ հուշագրությունը գրական գիտակցված ուղղություն դարձավ XIX դ. սկսած[3]։ Հասկանալի է, որ այս հանգամանքն էլ գալիս էր ուժ տալու Մխիթարյանների մոտ արմատացած մտայնությանը։ Այդ դեպքում ինչո՞վ բացատրել հուշագրության բնագավառում այն տարօրինակ աշխուժությունը, որը նկատվում է Մխիթարյանների մոտ հատկապես Ալիշանի կապակցությամբ, և, ի դեպ, այդ աշխուժությունը Ալիշանով էլ ավարտվում է։ «Ալիշանը ժամանակակիցների

[3] Տե՛ս Կ.Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, 250 էջ։

հուշերում» խորագիրը կրող ժողովածուից օգտվողները հեշտությամբ կարող են նկատել, որ այնտեղ զետեղված գործերի գրեթե կեսը գրել են Մխիթարյան միաբանության ավագ ու կրտսեր սերնդի անդամները. մարդիկ, որոնցից և ոչ մեկը, Ալիշանից բացի, Մխիթարյան որևէ այլ հեղինակի մասին հուշապատումներով հանդես չի եկել: Հարցի պատասխանն այս անգամ կապվում է նախ իր՝ Ալիշան գրողի, Ալիշան հայագետ-գիտնականի կատարած մեծ գործի հետ, և ապա հասարակական-քաղաքական այն իրադարձությունների հետ, որոնք ծայր առան XIX դ. կեսերից և իրենց հորձանապտույտի մեջ վերցրին նաև գրականության այդ բնագավառը:

Ալիշան-գրողի մասին խոսելիս՝ չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ, չնայած նա էլ սկսեց Մխիթարյան նախորդ հեղինակների նման, այսինքն՝ հանդես եկավ բազմաթիվ ծանրաշունչ, դժվարամարս գրաբարով ու այդ պատճառով գրեթե անհասկանալի բանաստեղծություններով ու պոեմներով, բայց 50-ական թվականներից սկսած պատկերը շեշտակի փոխվեց: 1847 թ. հունիսին «Բազմավեպը» հրատարակում է «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը՝ «Նահապետ» ստորագրությամբ, որը թե՛ կատարման ձևի, և թե՛ արտահայտած իմաստի տեսակետից նորություն էր թե՛ Ալիշանի, և թե՛ Մխիթարյան ամբողջ գեղարվեստական գրականության անդաստանում: «Հայոց աշխարհիկը» դարձավ հայ նոր գրականության սկզբնավորումն ազդարարող գործերից մեկը և միաժամանակ՝ գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի «առաջին ծիծեռնակը»[4]: Է՛լ ավելի մեծ եղավ նույն թվականի հոկտեմբերին «Բազմավեպում» հրատարակված «Պլպուլն Ավարայրի» պոեմի գրական-քաղաքական արձագանքը: Այս երկու գործերի հրատարակումն իսկ արդեն բավական եղավ, որ Ալիշան-Նահապետը լայն ճանաչում ու հռչակ ստանա: Այս տեսակետից հատկանշական է Սրապիոն Հեքիմյանի «Առ Ղևոնդ Ալիշան» ներբողական բանաստեղծությունը, որը գրվել է 1848 թ. հունիսին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Ալիշանը հրատարակել էր վերոհիշյալ երկու գործերը միայն: Սակայն այդքանն էլ բավական էր, որ Ս.Հեքիմյանը նրան դիմեր որպես հանրաճանաչ բանաստեղծի, որպես «մտաց կարապետի», որին պետք է հետևեն և ընդօրինակեն ուրիշները[5]: Հազիվ մի տարի անց նույնպիսի խոսքերով նրան պետք է դիմեր Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Հետագա գործերը և, մանավանդ, «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմագեղարվեստական արձակ ստեղծագործությունը եկան վերջնականապես գրական բարձրակետ ապահովելու Ալիշանի համար:

Գրեթե նույնն էր անում Ալիշանը նաև գիտության բնագավառում և գիտության օգնությամբ: Հրատարակելով իր պատմա-աշխարհագրական և հայագիտական-բանասիրական ուսումնասիրությունները, նա հայ ժողովրդին ծանոթացնում էր իր հարուստ պատմական անցյալի, հռչակավոր ու անվանի նախնիների հետ, նրանց կատարած մեծագործությունների, ոսոխներին ամեն վայրկյան սուրն ի ձեռին դիմագրավելու և անհրաժեշտության դեպքում «Վարդանապես մեռնելու» վեհ գաղափարաբանության հետ: Բավական է թեկուզ թեթևակի թերթել նրա նշանավոր «Տեղագիր հայոց մեծաց», «Լուր և տես Հայաստանի», «Շնորհալի և պարագա յուր», «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ» և այլ աշխատությունները՝ համոզվելու համար, որ դրանք միայն և բացառապես գիտական աշխատություններ չեն՝ այս հասկացողության չոր-ակադեմիական իմաստով, այլ գիտական բազում արժեքավոր փաստեր պարունակելով հանդերձ, խորապես հագեցած են հենց այն գեղարվեստական մտածողությամբ, որի մասին խոսեցինք: Հիշենք թեկուզ այն հանգամանքը, որ «Սիսուանի» մուտքն արգելվեց Օսմանյան կայսրության սահմաններում, իսկ որտեղ էլ որ, այնուամենայնիվ, թափանցել էր, անհապաղ բռնագրավվեց այն

[4] Ա.Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 26:
[5] Ս. Հեքիմեան, Տաղք, քերթուածք և թատրերգությունք, Պոլիս, 1857, էջ 21:

պատճառաբանությամբ, որ նրա ճոխ հայրենասիրական առաջաբանը «պղտորում է օսմանահպատակ ռայայի միտքը»[6]:

Բնականոն հետևանքն այն եղավ, որ հայագիտության ասպարեզում Ալիշանը՝ 60-70-ական թվականներից սկսած, դարձավ համաեվրոպական հեղինակություն. նրանից խորհուրդ էին հարցնում և նրան ունկնդրում էին այնպիսի ճանաչված հեղինակություններ, ինչպիսիք էին Դյուլյորիեն և Էմիլիո Տեզան, Բաումգարտենն ու Զախաուն, Կարրիերն ու Կիպերտը, Լանգլուան ու Էլիզ Ռեկլյուն, Հենրիխ Գելցերն ու Վինդիշմանը, ռուս մտավորականներից՝ Վլադիմիր Ստասովը, Նիկողայոս Մառը, Արիստ Կունիկը, Աֆանասի Բիչկովը, Մարի-Ժան Բրոսսեն և ուրիշներ: Անուններ են սրանք, որոնց սոսկ թվարկումն արդեն ակնբախորեն ցույց է տալիս, թե որպես հայագետ-գիտնական ինչպիսի մեծության էր հասել Նահապետը: Մխիթարյան նախորդ հայրերից և ոչ մեկին վիճակված չէր այսպիսի վիթխարի դեր կատարել հայ ժողովրդի մտավոր ու հասարակական կյանքում: Նրանցից ամենանշանավորներն անգամ, արժեքավոր ու անհրաժեշտ գործ կատարած լինելով հանդերձ, չկարողացան բարձրանալ համազգային մեծության այն մակարդակին, որին իր գործունեությամբ կարողացել էր հասնել Ալիշանը: Այս էր պատճառը, որ չնայած իր արտասովոր համեստությանը, Նահապետը պաշտամունք դարձավ ինչպես Մխիթարյանների, այնպես էլ ամբողջ հայ ժողովրդի համար, դարձավ գիտության և գրականության ասպարեզում մի յուրատեսակ չափանիշ, որի դրական կամ բացասական կարծիքը վերջին խոսքն էր դառնում տվյալ գրողի կամ գիտնականի համար: Նահապետի դրվատական նամակ-գրախոսականն, օրինակ, Ալեքսանդր Ծատուրյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի մասին բավական եղավ, որ նա վստահորեն շարունակի ճանապարհն այդ ուղով, և հայ գրականությունն այսօր ունենա Ալեքսանդր Ծատուրյան բանաստեղծին[7] և ընդհակառակը, նրա հայտնած բացասական կարծիքը Մինաս Չերազի «ընտրողական աշխարհաբարի» մասին, որ վերաբերում էր արևելահայերենն ու արևմտահայերենը հնարովի քերականության հենքի վրա միաձուլելուն, վճռեց ոչ միայն Չերազի նախաձեռնության, այլև այդ ինքնահնար «լեզվի» հետագա ճակատագիրը[8]: Իսկ նման օրինակներ կարելի է էլի բերել:

Հայ մտավորականի այսպիսի մեծ անունով և ավելի քան քսանհինգ անուն ինքնուրույն և թարգմանական բնույթի ամենազանազան աշխատությունների պատկառազդու «բեռով» Ալիշանը հասավ 1890 թվական, երբ համայն հայությունը ձեռնամուխ եղավ տոնելու նրա հիսունամյա հոբելյանը[9]:

«Ալիշանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուին թեթևակի ծանոթանալիս անգամ նկատելի է դառնում մի կարևոր հանգամանք. Նահապետի մասին հուշապատումները գերազանցապես սկսում են հանդես գալ 1890 թվականից սկսած: Ճիշտ է, մինչև այդ ունենք երեք հուշապատումներ էլ, որոնցից մեկը «Օրվան կյանքը» խորագրով, պատկանում է հռչակավոր Ա.Արփիարյանի գրչին (էջ 9-12), բայց դա որակական փոփոխություն չի մտցնում վերևում մեր ասածի մեջ: Եթե նշենք, որ միայն 1890 թ. Ալիշանի մասին հանդես եկան Գրիգոր Արծրունին, Արփիար Արփիարյանը (երկրորդ անգամ), Նիկողայոս Քարամյանը, «Արևելք» օրաթերթի թղթակից Աբրահամ Տեր-Հակոբյանը և եթե ավելացնենք, որ «քաջառողջություն», «արևշատություն», «հար-հարատևություն» ցանկացող նամակներով, հեռագրերով, հոբելյանական բացիկներով ու

---

[6] Ղ.Ալիշան, Նամակներ (բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս.Շտիկյանի), Երևան, 1969, էջ 105, 257:

[7] Նույն տեղում, էջ 113-114:

[8] Նույն տեղում, էջ 57:

[9] Մխիթարյան միաբանությունը իր անդամների հոբելյանները նշում էր ոչ թե նկատի ունենալով նրանց ծննդյան թվականի, այլ միաբանությանը անդամագրվելու ժամանակը. այդ կարգը, ի դեպ, գոյություն ունի առ այսօր: Ղևոնդ Ալիշանը, ինչպես հայտնի է, պաշտոնապես միաբանության անդամ էր դարձել 1840 թ. հունիսի 7-ից:

շնորհավորական քարտերով Վենետիկը հեղեղեցին հայ մտավորականության գրեթե բոլոր խոշոր ներկայացուցիչները (մանրամասն տե՛ս Ա.Արփիարյանի «Հոբելյան Հ.Ղևոնդ վարդապետ Ալիշանի» հուշապատումը. էջ 43-66), և վերջապես, եթե չմոռանանք, որ Հայաստանից և մյուս հայաշատ կենտրոններից հոբելյանական տոնակատարությանը մասնակցելու համար Վենետիկ ուղևորվեցին բազմաթիվ պատգամավորներ ու պատգամավորություններ, – մի բան, որ եզակի ու աննախադեպ իրադարձություն էր Մխիթարյան միաբանության կյանքում, – ապա առանց համապատասխան մեկնաբանությունների էլ հասկանալի կդառնա, թե ինչպիսի բնույթ ընդունեց Ալիշանի հոբելյանի տոնակատարությունը: Դրա պատճառներից առաջինի՝ Ալիշան-մտավորականի կատարած մեծ գործի մասին, արդեն խոսել ենք: Երկրորդ և ոչ պակաս կարևոր պատճառը սերտորեն կապվում էր ոչ մահմեդական ազգերի, հետևաբար նաև հայերի նկատմամբ վարվող այն քաղաքականության հետ, որն 90-ական թվականներից սկսած որդեգրել էր թուրքական կառավարությունը և կապվում էր «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ Բ-ի անվան հետ: Դաժան խստությունների, չպատճառաբանված հալածանքների, պարբերական հրատարակությունների՝ ոչնչով չհիմնավորվող արգելումների, անհիմն ու ցավագար կասկածամտությունների մի ժամանակաշրջան էր այդ, որի նմանը չէր տեսնվել ոչ մի երկրում:

Այս պայմաններում, հասկանալի է, թե ինչու արտակարգ մեծ իմաստ էր ստանում Ալիշանի հիսնամյակի տոնակատարության հանդեսը՝ որպես այդ դաժան ռեժիմին հակադրվելու ձևերից մեկը, և ինչու հոբելյանական տոնակատարությունը պետք է այդպիսի լայն ընդգրկում ունենար: Մխիթարյաններն, իհարկե, հասկացան, որ նման դեպքում պարզապես անհնար էր ու անկարելի հետևել իրենց մոտ արմատացած հնամենի սովորույթին և բավարարվել նեղ, «վանքային» բնույթի հոբելյան նշելով միայն, ինչ որ ի դեպ արվում էր հնուց անտի, սկսած Մխիթար Սեբաստացու ժամանակվանից, երբ ոտքի էր ելել ամբողջ հայ ժողովուրդը: Բայց և՝ լայնորեն ձեռնարկել այդ գործին, կնշանակեր անցնել մի ամբողջ շարժման գլուխ կամ համենայն դեպս, լինել այդ շարժմանը տոն տվողներից մեկը: Անցնել այդպիսի մի շարժման գլուխ, կնշանակեր գրգռել «Կարմիր սուլթանի» և նրա քաղաքականությունը կիրառողների մոնողական արյունը (տե՛ս Ավ. Իսահակյանի հուշապատումը. էջ 222), որը, ինչ խոսք, անուղղելի բացասական հետևանքներ կունենար ամբողջ միաբանության համար: Եվ Մխիթարյանները միջին մի գիծ մշակեցին իրենց համար, զգուշորեն ընթացան այդ գծով, որն ի դեպ, հիանալի կերպով հաջողվեց նրանց: Սկզբում հայտարարվեց, որ հոբելյանը տոնվելու է այնպես, ինչպես միշտ եղել է իրենց մոտ՝ միաբանության ներսում և նեղ-անձնական միջավայրում (տե՛ս Գր.Խալաթյանցի հուշապատումը. էջ 12): Մի քանի ամիս անց, հրատարակվեց իր՝ Ալիշանի, գրած ուղերձը համայն հայությանն ու հայ մտավորականներին, առաջիկայում կայանալիք իր հոբելյանը ըստ հնարավորին համազգային երևույթ չդարձնելու մասին: ՈՒղերձից, սակայն, պարզ էր, որ Մխիթարյանների մոտ համապատասխան նախապատրաստություններ արդեն տեսնվում էին: Իսկ հետո, երբ, այնուամենայնիվ, հոբելյանը կայացավ և ըստ ամենայնի համազգային բնույթ ընդունեց (տե՛ս Ա. Արփիարյանի «Հոբելյան Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» հուշապատումը, էջ 43-66), Մխիթարյանները նախ՝ ներքին ամեն ձևով ու միջոցներով խրախուսեցին նրա՝ ըստ ամենայնի համազգային երևույթ դառնալը, և ապա, Միաբանության պաշտոնական ամսագիրը՝ «Բազմավեպը», հրատարակեց բավականին ծավալուն մի հոդված իրենց մոտ տեղի ունեցած հոբելյանական տոնակատարության մասին, աներկմտորեն հասկացնելով, որ իրենք մինչև վերջ բաժանում են արևելահայության վարքագիծը: Եթե Վենետիկի Մխիթարյանները ստիպված էին ինչ-որ չափով զգուշություն պահպանել, եթե թուրքահայությունը 1890-ական թվականներին կոլեգնող համիդյան չարաշուք ռեժիմի հետևանքով բավարարվեց մեկ-երկու փոքրածավալ հոդվածներ հրատարակելով միայն, ապա միանգամայն այլ ձևով ընթացավ հոբելյանի տոնակատարությունը

Թուրքիայից դուրս գտնվող մյուս հայաշատ վայրերում։ Իրար հաջորդեցին գովաբանական հոդվածները, Ալիշանի գործն ու գործունեությունը մեկնաբանող զանազան մեծ ու փոքր ուսումնասիրությունները, պարբերականները լցվեցին ամենատարբեր բնույթի հուշապատումներով։ «Ղևոնդ Ալիշանը դարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է։ Իբրև բանաստեղծ բոլոր բանաստեղծների Նահապետն է, իբրև եկեղեցական մի շնորհալի է, իբրև գիտնական մի հանրագետ է». – հոբելյանի առթիվ «Տարազում» գրեց Ղ.Աղայանը[10]։ «Ղևոնդ Ալիշանը մեր ազգի ամենամեծ գրագետն է այժմ, նա հայկական գիտությանց միակ հեղինակությունն է 19-րդ դարու, նա է մեր նորագույն բանաստեղծության հայրը և, վերջապես, միայն նորան է պատկանում հայկական երկրորդ քերթողահայր լինելու պատվանունը», – գրեց Շիրվանզադեն «Արձագանքում»[11]։ «Գործը, զոր կթողու Ալիշան, հսկա հիշատակարան մըն է անխոնջ աշխատասիրության, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրության, կաթոգին ու խանդոտ զգայնության, զողտր և թևավոր երևակայության, – գործ հայրենասերի, կրոնավորի, հմուտի, ընդհանրացուցչի, թարգմանիչի», – գրեց Արշակ Չոպանյանը «Անահիտում»[12] և այլն։ Նման ասույթներ կարելի է շատ բերել, որոնք մի անգամ ևս վկայում են թե համազգային սիրո, հարգանքի, խաղաղ պաշտամուքի, հայ գրականության ու հայագիտության Նահապետի մինչև որ աստիճանին էր հասել հոբելյարը, և թե ինչպիսի աննախընթաց մեծություն էր դարձել նա անգամ Մխիթարյան միաբանության համար, այն միաբանության, որն իր երկարատև պատմության ընթացքում քիչ թվով նշանավոր մարդիկ չէր տեսել։ Եվ Ալիշանի գրավոր պատասխան-խոսքը, որն ունի «Առ բարէմաղթօղս յիսնամեա յոբելինիս» վերնագիրը, իր ժողովրդով հագեցած գիտնականի, նրա համար իր բոլոր հոգևոր կարողություններն ի սպաս դրած մտավորականի և միաժամանակ ժողովրդի՝ իր նկատմամբ ցուցաբերած այդպիսի մեծ սիրուց զարմացած ու շփոթված մարդու սրտալի շնորհակալությունն է, որն անկարելի է կարդալ առանց հուզմունքի։ Խորապես շնորհակալություն հայտնելով բոլորին՝ «հարգելի երիցանց, տյարց և տիկնայց, լրագրապետաց, ուսանողաց և ուսուցչաց... և ամեն բարեկամաց» և ավելացնելով, որ ինքը պարզապես աշխատել է օգտակար լինել ազգին իր «դույզն ինչ գրություններով» և ըստ իր կարողության օժանդակել նրանց, Ալիշանը հպարտությամբ ավելացնում է, որ «համազգիների»՝ իր հանդեպ ցուցաբերած անչափելի սիրուն ի պատասխան, ունի մի ուրիշ, առավել անչափելի ու անպարագրելի սեր։ Դա սերն է առ հայրենիքը[13]։

1890-ից մինչև իր մահը՝ 1901 թ., Ալիշան-մտավորականի կյանքի ու գործունեության հաղթական երթի շրջանն էր և, բնականաբար, հուշագրության բնագավառում թե՛ քանակական, և թե՛ որակական առումով նոր արժեքներ ստեղծելու տարիները։ Արդեն համազգային մեծություն դարձած և համաեվրոպական ճանաչում ստացած Ալիշանը կարողացել էր պատռել Մխիթարյան միաբանության ներսում եղած՝ հուշագրության չխրախուսման հետ կապված երկաթե օրենքը, որի մասին արդեն խոսեցինք, և դրա հետևանքով էլ նրա մասին իրենց մեծ ու փոքր պատումներով ազատորեն հանդես էին գալիս նրա ավագ և կրտսեր ընկերները։ Էլ չենք խոսում այլևայլ առիթներով նրան այցելության եկած հայ և եվրոպացի զանազան մտավորականների մասին, որոնք իրենց երկրները վերադառնալուն պես, պարբերականներում շտապում էին հանդես գալ հետաքրքիր հուշապատումներով՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության, նրա հայագիտական դրվածքի, կատարած հայագիտական մեծ գործի, և առանձնապես Նահապետի, նրա սրբակենցաղ վարք ու բարքի, գիտական գործունեության և բազում այլ հարցերի մասին։ Բանը նույնիսկ այնտեղ հասավ, որ երբ 1901 թ., Մխիթարյան միաբանությունը հանդիսավորությամբ նշեց իր

---

[10] Ղ.Աղայան, Հայր Ղևոնդ Ալիշան, («Տարազ», 1901, N 44)։

[11] Ալ. Շիրվանզադե, Հոբելյան Հ. Ղևոնդ Ալիշանի («Արձագանք», 1901, N 23)։

[12] «Անահիտ», 1902, N 4, էջ 69։

[13] Հ.Ղ.Ալիշան, Առ բարէմաղթօղս յիսնամեա յոբելինիս, Բազմավեպ, 1890, N 7, էջ 257-258։

գործունեության երկու հարյուրամյա հոբելյանը, հոբելյանական դափնեպսակների մեծ մասը դարձյալ վերագրվեց Ալիշանին՝ որպես այդ միաբանության ամենակարկառուն և արդյունաշատ անդամներից մեկին, իսկ հոբելյանի առթիվ ուղարկված հեռագրերի գերակշիռ մասի մեջ, այս կամ այն ձևով, դրվատանքի ու հիացմունքի խոսք ասվեց Ալիշանի հասցեին։ Հասկանալի է, որ դրան համապատասխան, պարբերականներում պետք է ավելի ու ավելի հաճախ հանդես գային ականատեսների զանազան բնույթի հուշապատումները։

Իհարկե, հարցի հասարակական-քաղաքական կողմը նույն հնչեղությամբ, շարունակում էր մնալ ուժի մեջ։ Հայ մտավորականությունը, ըստ ամենայնի բարձրացնելով ու դրվատելով Ալիշանին, նրա մեջ տեսնում էր հայության ազատության պատգամախոսին, զենքով ու կռվով բռնապետության լուծը թոթափելու կոչ անող մարտիկ-բանաստեղծին, «հող հայրենին» անարգող «պիղծերին» մինչև վերջին մարդը «ի բաց վանելու» մրրկաշունչ հորդոր կարդացող ազատաբաղձ մարգարեին։ Պատահական չէ, որ վերոհիշյալ ժամանակահատվածում և դրանից շատ հետո էլ հուշագրողների գերակշիռ մասը, Ալիշանի ասին գրելիս, առաջին պլան էր մղում ազատաբաղձությունն ու հայ ժողովրդին «ի զէն ի վրէժ» մղելու միտումը. մի հանգամանք, որը քիչ մնաց ճակատագրական հետևանք ունենար հենց իր՝ Ալիշանի համար...

Աշխարհ եկան 1894-96 սարսափելի թվականները՝ սկզբնավորելով հայ ժողովրդի մասսայական բնաջնջման մարդատյաց քաղաքականության սկիզբը։ Ինչպես և պետք է սպասել, աշխարհի ժողովուրդներին ու նրանց ներկայացուցիչներին խաբելու համար, թուրքական դիվանագիտության ներկայացուցիչները հնարեցին և ի լուր աշխարհի հրապարակեցին մի «տեսություն», որի հետ իրենք մեծ հույսեր էին կապում։ Ըստ այդ, թող ներվի ասել, «տեսության», հայ ժողովուրդը հնուց անտի եղել է անհնազանդ, մշտապես վարել է Օսմանյան կայսրության ամբողջականությունը քայքայելու քաղաքականություն, և նրան գրգռելու, կայսրության դեմ դուրս գալու գաղափարը հաստատուն կերպով ներարկում են ազգի մտավորականները։ Ի թիվս այլոց, այստեղ հիշատակվում է նաև Ղևոնդ Ալիշանի անունը։ Համազգային բանաստեղծը, կրքոտ հայասերն ու հայրենասերը, այսպիսով, գրչի իր մյուս ընկերների հետ, հայտարարված էր թուրքական հայաջինջ քաղաքականության պատճառներից ու դրդողներից մեկը։ Այս բանը մահու չափ ցնցել էր Նահապետին և հոգեկան ծանրագույն ապրումների պատճառ դարձել նրա համար։ Հուշագրողները նշում են, որ հաճախ տեսել են Նահապետին իր խցում փակված՝ հոնգուր-հոնգուր արտասվելիս, «ինքզինք պատճառ նկատելով ազգին գլխուն եկած այդ մեծ աղետներուն» (Թ. Թովմաճանի հուշապատումը, էջ 205)։

Ալիշանի մասին հուշագրությունները շարունակեցին հանդես գալ նաև նրա մահվանից հետո ընկած ժամանակահատվածում։ Այս բանի համար խթանը, թերևս շատ էլ չգիտակցելով այդ, դարձյալ տվեց Մխիթարյան միաբանությունը։ 1902 թ., այսինքն՝ Նահապետի մահվանից մեկ տարի անց, Վենետիկում հրատարակվեց Մխիթարյան միաբանության անդամ, գրականագետ Սիմոն Երեմյանի «Կենսագրություն Հ.Ալիշանի» աշխատությունը, որտեղ բացահայտված են Նահապետի կյանքի ու գրական գործունեության մի քանի՝ առավել հանգուցային շրջանները։ Այս աշխատության հրապարակումով Մխիթարյանները նորից ցույց տվեցին, որ իրենք Ալիշանին բարձր են դասում իրենց բոլոր մյուս նախորդներից, որովհետև Մխիթարյան հայրերից և ոչ մեկը «Բազմավեպում» հրատարակված և լավագույն դեպքում այդ պարբերականի մի քանի համարում շարունակվող հոդվածից բացի, իր մասին գրված ինքնուրույն ուսումնասիրության բախտին չի արժանացել։ Եվ, որ պակաս կարևոր չէ, վերոհիշյալ աշխատությունն ունի հատկապես այդ նպատակի համար գրված առանձին գլուխներ («Հոբելյան», «Ալիշան իր գրքերուն մեջ», «Անտիպ գրությունք», «Ալիշանի կյանքն ու բարքն», «Դրվագներ և զրույցներ»), որտեղ վերարտադրվում են

Ալիշանի հետ կապված զանազան բնույթի հուշեր։ Մի քանի տարի անց՝ 1905 թ., դարձյալ Վենետիկում, հրատարակվեց մի այլ Մխիթարյանի՝ Բարսեղ Սարգիսյանի «Երկու հարյուրամյա գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետկո Մխիթարյան միաբանության» ուշագրավ աշխատությունը, որտեղ «Ազգային առաջին բանաստեղծը» (էջ 305-334) խորագրի ներքո առանձին գլուխ կա նվիրված Ղևոնդ Ալիշանին։ Նախորդի նման այստեղ էլ, Նահապետի գեղարվեստական ժառանգությունը վերլուծելուց, նրա գրական տեղն ու դերը բացահայտելուց հետո, Բ. Սարգիսյանը մեջ է բերում մի քանի ուշագրավ հուշապատումներ։ Սա էլ էր նորություն Մխիթարյան գրականության անդաստանում, որովհետև առանձին գլուխ, կամ ինչպես տվյալ դեպքում՝ առանձին հատված ներկայացնել տվյալ անձնավորության մասին հուշեր պատմելուն, դեպք էր, որն իր նախորդը չէր ունեցել մինչև Ալիշանը եղած Մխիթարյան գիտնականներից և ոչ մեկի մոտ։ Այս հանգամանքը արդեն լրիվ ազատություն տվեց մխիթարյան և ոչ-մխիթարյան հեղինակներին, ովքեր այդ հետևությամբ, սկսեցին հուշերով հանդես գալ Նահապետի մասին։ Այդ հուշերը հիմնականում հրատարակվում էին Ալիշանի հետ կապված որևէ տարեդարձի առիթով, ասենք՝ մահվան տարելիցի (1902 թ.), կամ մահվան տասնամյակի (1911 թ.), կամ ծննդյան հարյուրամյակի (1920 թ.), կամ մահվան քսանհինգամյակի (1926 թ.), կամ, վերջապես, մահվան վաթսունամյակի առիթներով, թեև, իհարկե, հազվագյուտ չէին դեպքերը, երբ հուշերը հրատարակվում էին առանց որևէ առիթի, որպես առ Նահապետն ունեցած հոգեկան ներքին մղման արդյունք։ Հուշագրողները այդ շրջանում կարողանում էին գրել փոքր-ինչ ավելի ազատ, նորանոր փաստեր ու իրողություններ բացահայտել Նահապետի կյանքի ու աշխատանքի հետ կապված, պատմել բազմազան բնույթի ուշագրավ մանրամասներ։

ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»

1987, N 6